

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ  
ՀՐԱՄԱՆ

«20» մարտ 2019թ.

No 675 - Ա

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՎՃԱՐ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ  
«ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԵՎ ԱՌԱՆՁԻՆ ԽՄԲԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ  
ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ «ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ  
ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ  
ՕԳՆՈՒԹՅԱՆ» ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ, «ԱՌԱՆՁԻՆ  
ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԵՎ ՀԱՏՈՒԿ ԽՄԲԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾՆԵՐԻ  
ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ» ԾԱԾԿՈՒՅԹԻ «ՈՉ ՎԱՐԱԿԻՉ  
ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ» ԾՐԱԳՐԻ  
«ՈՒՌՈՒՑՔԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԱՐՅՈՒՆԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ՄԻՋՈՑԱՌՄԱՆ  
«ՈՒՌՈՒՑՔԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԻՐԱՀԱՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ  
ՕԳՆՈՒԹՅԱՆ», «ՍՐՏԻ ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ՎԻՐԱՀԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»,  
«ԵՐԵՒԱՆԵՐԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ (ՍՐՏԻ ՎԻՐԱՀԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ)»  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԾԱԾԿՈՒՅԹՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ  
ԴԵՊԲԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՎԱՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԱԵԼՈՒ  
ԵՎ ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 17-Ի  
ԹԻՎ 1800-Ա ՀՐԱՄԱՆԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 728-Լ որոշման հավելվածով հաստատված առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետը, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2017 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 3613-Ա հրամանի հիման վրա բժշկական կազմակերպությունների հետ կնքված պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման մասին պայմանագրերի 2.2.11-րդ

կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետը.

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով «Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված անձանց բժշկական օգնություն» ծրագրի «Զինձառայողներին, ինչպես նաև փրկարար ծառայողներին և նրանց ընտանիքի անդամներին բժշկական օգնության» ծառայություններ միջոցառման, «Առանձին սոցիալապես անապահով և հատուկ խմբերում բժշկական օգնություն» ծածկույթի «Ոչ վարակիչ հիվանդություններ բժշկական օգնության ապահովում» ծրագրի «Ուռուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ» միջոցառման «Ուռուցքաբանական հիվանդությունների վիրահատական բժշկական օգնության», «Սրտի անհետաձգելի վիրահատություններ», «Երեխաներին բժշկական օգնության (սրտի վիրահատություններ)» ծառայություններ ծածկույթների աշխատանքներն իրականացնել դեպքերի անհատական վարման (case management) սկզբունքով.

### Հաստատել՝

2. Պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով «Սոցիալապես անապահով և առանձին խմբերի անձանց բժշկական օգնություն» ծրագրի «Զինձառայողների, ինչպես նաև փրկարար ծառայողների և նրանց ընտանիքի անդամների բժշկական օգնության» ծառայություններ միջոցառման, «Առանձին սոցիալապես անապահով խմբերի բժշկական օգնություն» ծածկույթի «Ոչ վարակիչ հիվանդություններ բժշկական օգնության ապահովում» ծրագրի «Ուռուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ» միջոցառման «Ուռուցքաբանական հիվանդությունների վիրահատական բժշկական օգնության», «Սրտի անհետաձգելի վիրահատություններ», «Երեխաներին բժշկական օգնության (սրտի

վիրահատություններ)» ծառայություններ ծածկույթների աշխատանքներն իրականացնել դեպքերի անհատական վարման ընթացակարգով՝ համաձայն հավելվածի:

3. Առողջապահության նախարարության աշխատակազմի պետական առողջապահական գործակալության պետ Ծաղիկ Վարդանյանին՝

ապահովել սույն հրամանի 1-ին կետով սահմանված պահանջի իրականացումը սույն հրամանն ուժի մեջ մտնելու պահից:

4. Առողջապահության նախարարության աշխատակազմի հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանին՝

ապահովել սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

5. Առողջապահության նախարարության աշխատակազմի քարտուղարության պետ Զարուհի Դարբինյանին՝

ապահովել սույն հրամանի առաքումը Պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով «Սոցիալապես անապահով և առանձին խմբերում ընդգրկված անձանց բժշկական օգնություն» ծրագրի «Զինծառայողների, ինչպես նաև փրկարար ծառայողների և նրանց ընտանիքի անդամների բժշկական օգնության» ծառայություններ միջոցառման, «Առանձին սոցիալապես անապահով խմբերի բժշկական օգնություն» ծածկույթի «Ոչ վարակիչ հիվանդություններ բժշկական օգնության ապահովում» ծրագրի «Ուռուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ» միջոցառման «Ուռուցքաբանական հիվանդությունների վիրահատական բժշկական օգնության», «Սրտի անհետաձգելի վիրահատություններ», «Երեխաներին բժշկական օգնության (սրտի վիրահատություններ)» ծառայություններ ծածկույթների շրջանակներում ներկայացվող դեպքերի անհատական վարման միջոցով բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններին:

6. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ առողջապահության նախարարի 2018 թվականի հուլիսի 17-ի Պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով «Զինծառայողներին, ինչպես նաև փրկարար ծառայողներին և նրանց ընտանիքի անդամներին բժշկական օգնության ծառայություններ» ծրագրով դեպքերի

անհատական վարման ընթացակարգը հաստատելու վերաբերյալ թիվ 1800-Ա հրամանը:

7. Սույն հրամանները ուժի մեջ են մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

ԱՐՄԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ